ընդ որս էր և ճարտարապետ քաղաքին, և եկեալ արկին 'ի քննութիւն զբովանդակ տեղիսն, և ետուն չափել ըզբարձրութիւն և զլայնութիւն պարսպին, և զայլ տեղիս մի առ մի, և դարձ արարեալ առ դատաւորն, մատուցին նմա զարդիւնս քննութեան, և նորա 'ի գրի հարեալ զամենայնն ետ ցՅովհաննէս Պատրիարք: Սակայն զկնի նորոգութեանցս այսոցիկ՝ բազում չարիս կրեցին Պատրիարքն և միաբանք Ս. Յակոբայ յերեսաց այլազգեաց, զի բազում անգամ քննութիւն արարեալ, հրաման տային նորոգութեան՝ այլ 'ի ձեռնարկելն Հայոց 'ի գործ՝ յարուցանէին վէճս և խռովութիւնս պատճառելով զպատճառս, և խափանէին զգործն, որպէս յայտ առնեն բազմաթիւ գրեանք դատարանի և այլոց վասն այսր. հուսկ ուրեմն հաճեցոյց զկամս նոցա՝ և աւարտեաց զնորոգութիւնն, կրելով միշտ և զնեղութիւնս, այլ ոչ խսպառ կարաց զերծանիլ 'ի վնասուց և 'ի տուգանացն այլազգեաց, զորոց տեսցի 'ի ստորև, ١١٠٣ (1692):

Ի սմին ժամանակի Յոյն պատրիարքն Երուսաղէմի նըստեալ 'ի Կոստանդնուպօլիս, առաքէր առ փոխանորդ իւր ազգի ազգի հրովարտակս, երբեմն վասն Լատինացեալ Յունաց, և երբեմն վասն ձիթենեաց և արտօրէից Ս. Եղիայի վանաց, զոր ժառանգեցին 'ի Վրաց. բայց նա և ոչ զմին կարէր գործադրել, այլ միայն տայր առատ տուգանս, և 'ի նոյն ձգէր նաեւ զՅովհաննէս Պատրիարք Հայոց: Եւ յաւուրս քառասնորդական պահոց համբաւ իմն տարածեաց 'ի քաղաքին, իբրու թէ Պատրիարքն Յունաց առեալ իցէ հրովարտակաւ զՍ. Յակոբ 'ի ձեռաց Հայոց, և պահեալ զհըրովարտակն 18 յամսեանն Յունիսի՝ տարեալ մատոյց առ դատաւորն զի արձանագրեսցէ զայն 'ի գաղտ, և նորա չառեալ յանձն՝ կոչեաց զՀայս և զԼատինս, և առաջի ամենեցուն ընթերցաւ զայն, որոյ իմաստքն էին՝ յերեկոյի ծրագալուցի Զատկին միայն Պատրիարքն Յունաց և կամ փոխանորդ նորին մտցէ 'ի Գերեզմանն Քրիստոսի, և այլք կացցեն արտաքս:

Եհարց դատաւորն ցՅովհաննէս Պատրիարք, յօժարի՞ք ընդ այս, և նորա, մերժեալ զբանս Յունաց, մատոյց զհին գրեանս, որք յաւուրս Անդրիաս Պատրիարքի,